

նիւթին, արեւմտեայց մէջ քարեղէն կամ փայտեղէն էր: Բայց անտեսելու չենք՝ որ մեզ դրացի եւ անշուշտ մեր բարուց ալ կցորդ Աղուանից արքունի ճաշարանին մէջ կը յիշուին «երկուս արծարի մեծագոյն սեղան», որոց վրայ կը հաւաքէին խորտիկներէն՝ յետոյ աղքատաց բաշխելու համար (Կաղ. 47):

Այն տաճարաց մէջ՝ ուր շատ բազմութիւն կը հաւաքուէր, ինչպէս արքունականը, եւ յաճախ աշխարհականք ու եկեղեցականք խառն, չէր կարելի բոլորն ամփոփել մի միայն սեղանի շուրջ, որ անհեթեթ մեծութեամբ՝ պիտի գրաւէր ամբողջ սրահը, եւ դեռ չպիտի բաւէր: Հետեւաբար զանազան սեղաններ կային, որով Մանդակունին «սեղանք» կը կոչէ (59). եւ Մեսրոբ անոցմէ կը թուէ Արշակայ օրով «ինն» լոկ եկեղեցականաց յատուկ (39): Արդէն նոյնպէս էր Հոովմայեցւոց քով ալ, ուր մինչեւ տասն սեղան յիշուած կայ (Գար. Ա, 1279):

Հոովմացիք կայսերութեան շրջանին սովոր էին սեղանը ծածկել ազնիւ օթոցով մը (Գար. Ա, 1280): Նոյնը չենք կարող եւ մեր քով տեսնել, երբ եկեղեցւոյ «սեղանն» ալ միշտ ունէր իւր թանկագին ծածկոյթը, «հանդերձ» կամ «զգեստ» կոչուած